ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2012թ. N 600

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած որոշումը՝ 2012 թվականի դեկտեմբերի 14-ին անցկացված մրցույթի վերաբերյալ:
2. Թույլատրել <<Հելլա-Ուեյ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու <<Արմավիր-Մարգարա> ավտոբուսային երթուղին՝ 4 /չորս/ տարի ժամկետով՝ 29 դեկտեմբերի 2012թվականից:
3. <<Վաղարշապատ-Զվարթնոց>>,<<Վաղարշապատ-Արմավիր>>, <<Վաղարշապատ-Գայ>>, <<Վաղարշապատ-Ամբերդ>>, ավտոբուսային և <<Վաղարշապատ-Արևաշատ>> միկրոավտոբուսային երթուղիների մրցույթը համարել չկայացած մասնակցության հայտ չլինելու պատճառով:
4. Թույլատրել՝ <<Էջմիածնի ԲՈՒԱՏ>> բաց բաժնետիրական ընկերությանը երրորդ կետում նշված երթուղիները շահագործելու մինչև նոր մրցույթի կայացումը
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012թվականի դեկտեմբերի 29-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***